Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, ԳԻՄ Նախագահ

_____ Ն. Խ. Սարիբեկյան

«31» 08 20/2թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. Ընդհանուր դրույթներ

1.1 Ավանդական բժշկության համալսարանի Ուսանողական Խորհուրդը /այսուհետ՝ ԱԲՀ ՈՒԽ/ ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման և նրա ընկերային շահերը ներկայացնող բարձրագույն ընտրովի մարմին է:

1.2 ԱԲՀ ՈՒԽ-ն ապաքաղաքական, ապակուսակցական և ներհամալսարանական կազմակերպություն է:

1.3 ԱԲՀ ՈՒԽ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողների շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական,ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը:

1.4 ԱԲՀ ՈՒԽ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը, ԱԲՀ կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.5 ԱԲՀ ՈՒԽ-ն ունի անկյունային դրոշմ, պաշտոնաթուղթ և իր գործունեությամբ և նվիրատվությամբ ձեռք բերած ֆինանսական միջոցները տնօրինելու իրավունք:

1.6 ԱԲՀ ՈՒԽ-ի լրիվ անվանումն է. հայերեն՝ Ավանդական բժշկության համալսարանի Ուսանողական Խորհուրդ, ռուսերեն՝ Студенческий Совет Университета Традиционной Медицины, անգլերեն՝ Student Council of the Universiti of the Traditional Medicine: Իսկ կրճատ անվանումները. հայերեն՝ ԱԲՀ ՈՒԽ, ռուսերեն՝ СС УТМ, անգլերեն՝ SC UTM:

1.7 ԱԲՀ ՈՒԽ-ի հասցեն է՝ ք.Երևան, Ավան, Բաբաջանյան 38ա:

II. ԱԲՀ ՈՒԽ-ի նպատակները և գործունեության հիմնական ուղղությունները

2.1 Պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,

2.2 պահպանել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը,

2.3 համալսարանի կառավարման համապատասխան մարմիններին ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր,

2.4 աջակցել ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,

2.5 իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին,

2.6 միավորել համալսարանի ուսանողությանը՝ նպաստելու ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանելու ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական և ֆիզիկական զարգացմանը,

2.7 կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,

2.8 մասնակցել ԱԲՀ տարածքում ներքին կարգապահության պահպանմանը,

2.9 ԱԲՀ ՈՒԽ-ն իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով նշված նպատակներից: Այն համագործակցում է ՀՀ-ում և արտերկրում գործող բուհական, ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ՝ փոխհարաբերությունները կառուցելով պայմանագրային և համագործակցության ու փոխշահավետության հիմունքներով:

2.10 ԱԲՀ ՈՒԽ-ն համալսարանի կանոնադրության շրջանակում, սահմանված կարգով կարող է իրականացնել հրատարակչական գործունեություն, սոցիոլոգիական և այլ կարգի հետազոտություններ, իրականացնել խորհրդատվություն:

III. ԱԲՀ ՈՒԽ-ի կառուցվածքը, ղեկավար մարմիններն և այդ մարմինների գործառույթները

3.1 ՈՒԽ-ի բարձրագույն ղեկավար մարմինը ԱԲՀ ՈՒԽ-ի ընդհանուր ժողովն է, որը գումարվում է ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի սկզբին: Ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Ընդհանուր ժողովի քննարկման հարցերն են.

1. Քննարկել ՈՒԽ-ի կանոնադրությունը
2. Ընտրել ուսանողական խորհրդի նախագահ և նախագահի առաջարկությամբ ընտրել փոխնախագահ և քարտուղար
3. Քննարկելով նախորդ կիսամյակի ծրագրերը՝ կազմել և բարելավել նոր ծրագրեր եկող կիսամյակի համար:

ՈՒԽ-ի նախագահությունը կազմված է՝

ա/ նախագահից

բ/ փոխնախագահից

գ/ քարտուղարից

դ/ հանձնաժողովների ղեկավարներից:

ՈՒԽ-ի նախագահի որոշմամբ կամ ՈՒԽ-ի անդամների ընդհանուր թվի 1/3-ի պահանջով կարող է հրավիրվել ՈՒԽ-ի նիստ:

ՈՒԽ-ի կառավարման մարմիններն են՝

ա/ նախագահը

բ/ փոխնախագահը

գ/ հանձնաժողովի ղեկավարները:

ՈՒԽ-ի կառավարման մարմինները՝

- ղեկավարում են արդեն իսկ հաստատված աշխատանքների իրականացումը,
- նիստեր են գումարում անհրաժեշտության դեպքում, որտեղ քննարկվում են ՈՒԽ-ի ընթացիկ հարցերը և լսվում են զեկուցումներ հանձնաժողովներում կատարվող աշխատանքների մասին:

ՈՒԽ-ի լիազորությունների ժամկետը 1 տարի է: Ժամկետից շուտ այդ լիազորությունները դադարեցվում են ՈՒԽ-ի անդամների ընդհանուր թվի 2/3-ի որոշմամբ:

ՈՒԽ-ի ՆԱԽԱԳԱՀԸ՝

- վարում է ընդհանուր ժողովի նիստերը, նիստերի ընթացքում կազմակերպում է նախագահության անդամների հաշվետվությունների և առաջարկությունների քննարկում,
- հարկ եղած դեպքում ռեկտորատ է ներկայացնում ՈՒԽ-ի գործունեության մասին կիսամյակային ամփոփում,
- հաստատում է հանձնաժողովների ղեկավարներին, համագումարում նրանց աշխատանքները, իսկ անբավարար աշխատանքի դեպքում դադարեցնում նրանց գործունեությունը,
- առաջարկում է փոխնախագահի և քարտուղարի պաշտոնները:

Փոխնախագահը նախագահի բացակայության դեպքում զբաղվում է նախագահի բոլոր գործառույթներով, իսկ նախագահի ներկայության դեպքում՝ օգնում նրան աշխատանքներ կատարելուց:

IV. ՈՒԽ-ի հանձնաժողովները

ՈՒԽ-ում գործում են հանձնաժողովներ, որոնց խնդիրն է կազմակերպել աշխատանքներ հետևյալ ոլորտներում՝

<u>մշակութային.</u>

Այս ոլորտի նպատակը ուսանողների բարոյահոգեբանական զարգացվածությունն է, որի համար պետք է ավելի հաճախ կազմակերպվեն միջոցառումներ,

<u>սպորտային.</u>

Այս ոլորտի անդամների պարտականությունն է ժամանակ առ ժամանակ կազմակերպել սպորտային մրցույթներ և միջոցառումներ,

<u>ժամանցային և հանգստի.</u>

Այս ոլորտի հիմնական նպատակն է ապահովել ուսանողների հետաքրքիր ժամանցը,

առաջադիմության.

Այս ոլորտի անդամները պետք է փորձեն մրցակցություն առաջացնել ուսանողության մեջ՝ ամեն կիսամյակ հռչակելով լավագույն ուսանող և ուսանողուհի,

արտաքին կապերի և հարաբերությունների.

Այս ոլորտի անդամները պետք է կապ հաստատեն այլ բուհերի հետ՝ կազմակերպելով հանդիպումներ:

V. ՈՒԽ-ի վերակազմավորումը

ԱԲՀ ՈՒԽ-ն վերակազմավորվում է ԱԲՀ ՈՒԽ ընդհանուր խորհրդի անդամների 2/3-ի որոշմամբ: